ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական

խորհրդի 2019թ. հունվարի 14-ի նիստի

Ներկա էին գիտական խորհրդի 68 անդամներից 53-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ում իրականացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրերի 2018թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող հաշվետվությունների քննարկում:

Զեկուցողներ՝

1.	Ագրոկենսատեխնոլոգիայի գ/կ տնօրեն	Սահակյան Աղվան Ջումշուդի
2.	Խաղողապտղագինեգործության գ/կ տնօրեն	Հարությունյան Ֆիրդուս Գրիշայի
3.	Հ.Պետրոսյանի անվ. հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գ/կ տնօրեն	Ղազարյան Հունան Ղազարի
	Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմատացման ԳՀ ինստիտուտ	
4.	Ավտոմոբիլային փոխադրումների բաժնի վարիչ	Բազիկյան Նորիկ Ավետիսի
5.	Դաշտավարության մեքենայացման բաժնի վարիչ	Ալթունյան Արթուր Վաղինակի
6.	Անասնապահ. և կերարտադրության մեքենայացման բաժնի վարիչ	Մարգարյան Ստեփան Ենոքի
	Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀ ինստիտուտ	
7.	Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիաների բաժնի վարիչ	Բեգլարյան Ռազմիկ Արշակի
8.	Բուսական ծագման մթերքին և հումքի վերամշակման տեխնոլոգիայի բաժնի վարիչ	Յավրույան Վարդան Նիկողոսի
9.	Սննդի անվտանգության և կենսատեխ-նոլոգիայի բաժնի վարիչ	Փեփոյան Աստղիկ Ջավենի

Հետազոտական կենտրոններ

10.	Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի տնօրեն	Ոսկանյան Աշոտ Երջանիկի
11.	Գյուղատնտեսական կենդանիների գենետիկայի և կերակրման հետազոտական կենտրոնի տնօրեն	Մարմարյան Յուրի Գիգոլի
12.	Պեստիցիդների և բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոնի տնօրեն	Ենգոյան Ալեքսանդր Փայլակի
13.	Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի հետազոտական կենտրոնի տնօրեն	Մելիքյան Անդրեաս Շմավոնի
14.	Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության հետազոտական կենտրոնի տնօրեն	Գալստյան Մերուժան Հայկարա
15.	Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի տնօրեն	Նաղաշյան Հովհաննես Զավենի

Լաբորատորիա

16.	Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ	Հովհաննիսյան Զարուհի Էդուա

2. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ում իրականացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրերի 2018թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կատարված աշխատանքների հաշվետվությունները

/կցվում են/:

Զեկուցողները նշեցին, որ հաշվետու ժամանակահատվածում գիտական գործունեության ոլորտում արձանագրվել են որոշակի հաջողություններ: Սակայն, հետազոտական աշխատանքները կատարելու համար կան որոշակի խնդիրներ: Նշվեց հետազոտական սարքավորումների նորացման

անհրաժեշտությունը: Եղան առաջարկություններ հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Արտահայտվեցին՝ Հ.Հովսեփյանը, Ռ.Մակարյանը: Ռեկտոր Վ.Ուռուտյանը շատ կարևորեց հաշվետվությունների քննարկումը այն առումով, որ հնարավորություն է ընձեռնում ծանոթանալու կատարված գիտական և գիտատեխնիկական աշխատանքների հետ, որոնց ընթացքում նոր գաղափարներ են ծնվում, նոր ծրագրերի հիմք և նախադրյալներ են ստեղծվում: Նշեց, որ համալսարանը ունի շատ մեծ գիտական ներուժ, բայց պակասում է կատարված գիտական աշխատանքների արդյունքների հանրայնացումը և ներդրումը: Բացակայում է նաև կապը գործընկերների և գործատուների հետ:

Որոշեցին՝ Հաստատել ՀԱԱՀ-ում իրականացված գիտական և գիտատեխնիկական բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ներկայացված ծրագրերի 2018թ. հաշվետվությունները և երաշխավորել հետագա ֆինանսավորման:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանի հաղորդումը «Ուսումնական գործընթացի ավտոմատացված համակարգի ներդրման վիճակը և խնդիրները» հարցի վերաբերյալ:

Նշվեց, որ 16.05.2018թ. արձ.N 9 նիստում ընդունված որոշման հանձնարարականները կատարված են մասնակի, իսկ որոշ կետերը կատարված չեն:

Որոշեցին՝ Լսելով և քննարկելով «Ուսումնական գործընթացի ավտոմատացված համակարգի ներդրման վիճակը և խնդիրները» հարցը գիտական խորհուրդը

ո ր ո շ ու մ է՝

/որոշումը կցվում է/:

Լսեցին՝ ՀԱԱՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռ.Մակարյանը առաջարկեց ՀԱԱՀ ռեկտորի կողմից վավերացված 2015թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման

չափորոշիչներ»-ի 4-րդ կետում կատարել փոփոխություն և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

4. Դասախոսական, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կազմակերպել զույգ ժամերով, բուհում ակադեմիական ժամը սահմանել 1-2-րդ դասաժամի համար 60 րոպե, 3-4-րդ դասաժամից սկսաց՝ 50 րոպե տևողությամբ:

Արտահայտվեցին՝ Ա.Աղաբաբյանը, Ա.Սմբատյանը, Հ.Հովսեփյանը, Մ.Բաղալյանը, որոնք հավանություն տվեցին ներկայացված առաջարկությանը:

Որոշեցին՝ Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափորոշիչներ»-ի 4-րդ կետը հետևյալ խմբագրությամբ՝

4. Դասախոսական, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքները կազմակերպել զույգ ժամերով, բուհում ակադեմիական ժամը սահմանել 1-2-րդ դասաժամի համար 60 րոպե, 3-4-րդ դասաժամից սկսաց՝ 50 րոպե տևողությամբ:

Վերը նշված փոփոխությունները (որոշումը) ուժի մեջ է մտնում 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:

Գիտխորհրդի նախագահ Վ.Ուռուտյան

Գիտքարտուղար Դ.Ս.Բալասանյան